

ՄԵՐ ՀՈՒՔԵԼՅԱՐՆԵՐԸ



ԳԱԳԻԿ ԽՈՐԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

(ծննդյան 90 - ամյակին ընդառաջ)

2016թ. ապրիլին ականավոր պատմաբան և արևելագետ (մասնավորապես ասորագետ և սեպագրագետ) Գագիկ Սարգսյանը կդառնար 90 տարեկան: Նա ծնվել է նշանավոր բանասեր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Խ.Ս. Սարգսյանի ընտանիքում (1891-1970 թթ.): 1946-1950 թթ. Գ. Սարգսյանը սովորել է Լենինգրադի համալսարանի (Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարան) պատմության ֆակուլտետում, որտեղ նրան Հին աշխարհի պատմություն են դասավանդել նշանավոր գիտնականներ Վ.Վ. Ստրուվեն, Ս.Ի. Կովալյովը, Ք.Ս. Կոլոբովան, ինչպես նաև հայտնի սեպագրագետ Ի.Ս. Ղյակոնովը: Համալսարանն ավարտելուց հետո 1951-1954 թթ. եղել է ԽՍՀՄ ԳԱ Պատմության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի ասպիրանտ: Նրա գիտական ղեկավարը պ.գ.դ., պրոֆ. Ս.Ե. Սերգեենկոն էր: 1954թ. Գ. Սարգսյանը հաջողությամբ պաշտպանել է «Հին Հայաստանի քաղաքը» թեկնածուական ատենախոսությունը: Այնուհետև վերադարձել է Հայաստան և աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտում: 1956-1962 թթ. հանդիսացել է ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի գիտնական-քարտուղար: Այնուհետև նշանակվել է ԳԱ Պատմության ինստիտուտի փոխտնօրեն, ապա 1967թ.՝ նույն ինստիտուտի Հին պատմության բաժնի վարիչ: 1967թ. Գ. Սարգսյանը հաջողությամբ պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, որը վերաբերում էր հին Հայաստանի հելլենիստական քաղաքներից մեկի՝

Տիգրանակերտի պատմությանը: 1971-1994 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ նորաստեղծ Արևելագիտության ինստիտուտի առաջին տնօրենը: 1988-1990 թթ. միաժամանակ վարել է ՀՀ ԳԱ փոխնախագահի պաշտոնը, ապա հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: 1974թ. ընտրվել է Հայաստանի ԳԱ թղթակից-անդամ, իսկ 1986թ.՝ ակադեմիկոս¹:

Գ. Սարգսյանի գիտական ունակությունները փայլեցին գիտությամբ զբաղվելու հենց առաջին օրերից: Նա որպես գիտական ժառանգություն սերունդներին թողեց մի քանի արժեքավոր մենագրություններ և 200-ից ավելի հոդվածներ: Դրանք տպագրվել են ոչ միայն մեր հանրապետության առաջատար հանդեսներում («ՊԲՀ», «ԼՀԳ», «Բանբեր ԵՊՀ»-ի և այլն), այլև ԽՍՀՄ (ինչպես, օրինակ, «Լրաբեր հին պատմության» («Вестник древней истории»), «Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդները» («Народы Азии и Африки»), «Պատմության հարցեր» («Вопросы истории»), նաև արտասահմանյան տարբեր երկրների հանդեսներում՝ Գերմանիա, Ֆրանսիա, Հունգարիա, Ավստրիա, ԱՄՆ, Պարսկաստան և այլն: Անհրաժեշտ է ընդգծել, որ այդ աշխատությունները այսօր էլ լիովին պահպանել են իրենց գիտական այժմեականությունը: Հին աշխարհի պատմության և ոչ մի լուրջ մասնագետ, առավել ևս հայագետ, չի կարող չըջանցել Գ. Սարգսյանի գիտական ժառանգությունը: Փաստորեն նա հասավ աստիճանավանդակի այն սանդուղքին, որի վրա արդեն գտնվում էին հին և միջնադարյան Հայաստանի պատմության ուսումնասիրության բնագավառի մեր մյուս երկու մեծերը՝ ԽՍՀՄ ԳԱ ակադ. Հ.Հ. Մանանդյանը և ՀԽՍՀ ԳԱ ակադ. Ս.Տ. Երեմյանը:

Հելլենիստական դարաշրջանի քաղաքային կյանքի վերլուծությանը նվիրված Գ. Սարգսյանի «Տիգրանակերտ: Հին Հայաստանի քաղաքային կյանքի պատմությունից» արժեքավոր մենագրությունը ԽՍՀՄ-ում առաջիններից մեկն էր, եթե չասենք առաջինը, որ վերաբերում էր այդ դարաշրջանի քաղաքներից մեկի պատմության ամբողջական հետազոտմանը: Համեմատության համար պետք է միայն արձանագրել, որ հելլենիստական քաղաքին նվիրված ռուս երկու հանրահայտ ուսումնասիրողների՝ Գ.Ա. Կոշելենկոյի և Է.Դ. Ֆրոլովի մենագրությունները գրվեցին Գ. Սարգսյանի այս աշխատությունից բավական ուշ²: Փաստորեն, առանց որևէ վերապահության Գ. Սարգսյանին պետք է համարել խորհրդային պատմագիտության մեջ հելլենիստական դարաշրջանի քաղաքների ուսումնասիրման առաջատարներից մեկը: Գրքում հեղինակը ներկայացրել է ոչ միայն քաղաքի բուն պատմությունը, այլև առաջին անգամ հատուկ ուշադրություն է հատկացրել Տիգրանակերտում գերմանացի նշանավոր պատմաբան Կ.Ֆ. Լեմանն (Լեհմանն)-Հաուպտի 1899թ. հայտնաբերած հունարեն

¹Ավելի մանրամասն տե՛ս Ակադեմիկոս Գ.Խ. Սարգսյանի տպագիր աշխատությունների մատենագիտություն: Գիտնականի ծննդյան 80-ամյակի առթիվ, խմբ. Վ.Բ. Բարխուդարյանի, Պ.Ս. Սուրադյանի, Եր., 2006, էջ 5 և հաջ.:

²Տե՛ս Գ.Ս. Սարգսյան, Тигранакерт. Из истории древнеармянских городских общин, М., 1960, Г.А. Кошеленко, Греческий полис на эллинистическом Востоке, М., 1979, Э.Д. Фролов, Рождение греческого полиса, Л., 1988.

արձանագրության վերլուծությանը, որ նրա վիճաբան տեքստի առաջին հանգամանակից և գիտական հիմքերի վրա դրված քննարկումն էր¹: Այս արձանագրության հիշատակումը մեր կողմից բուրբուրվին էլ ինքնանպատակ չէ, քանզի առայժմ գիտության համար վիճելի է համարվում Տիգրանակերտի տեղադրության հարցը²:

Նախահելլենիստական դարաշրջանի Առաջավոր Ասիայի ուսումնասիրության ասպարեզում Գ. Սարգսյանի ամենակարևոր նորամուծություններից էր «քաղաքացիական-տաճարային համայնք» արտահայտության առաջին անգամ կիրառումը և գիտական շրջանառության մեջ ներդրումը³:

Հետագայում նրա գիտական պրպտումներում տեղի ունեցավ կտրուկ շրջադարձ: Գ. Սարգսյանի գիտական վաստակի անկյունաքարը դարձավ Մովսես Խորենացուն վերաբերող աշխատությունների հրապարակումը: Խորենացիագիտությունը մինչ այդ անցել էր զարգացման բավականին բարդ և երկարատև ճանապարհ⁴: Թվում էր, թե այլևս անհնար է որևէ նոր խոսք ասել մեր Պատմահոր մասին: Բայց նա կարողացավ տեսնել այն բացերը, որ առկա էին և, հրատարակեց երկու կարևոր մենագրություն, որոնք վերաբերում էին Պատմահոր «Հայոց պատմությանը»: 1965թ. տպագրվեց նրա «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը» աշխատությունը: Խորենացու ժամանակագրությանը անդրադարձել են նաև նախկին որոշ նշանավոր հայագետներ, սակայն նրանց գործերում բացակայում էր ամենակարևորը՝ մատենագրի վկայությունների համաժամանակյա վերլուծությունը: Այս պատճառով էլ բազմաթիվ խրթին հարցեր չէին ստանում իրենց վերջնական պատասխանները և հանգեցնում էին գիտական թեժ բանավեճերի: Գ. Սարգսյանի այս մենագրությունը հիմնականում վերջակետ դրեց տեղի ունեցող անզիջում վեճերին:

Հաջորդ տարի՝ 1966թ., հրատարակվեց «Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին» մենագրությունը, որը որակական նոր երևույթ էր այդ դարաշրջանի Հայաստանի պատմության ուսումնասիրության մեջ: Այստեղ քննարկումն ուներ միանգամից մի քանի ուղղվածություն: Հետազոտման առարկա էին դարձել հայոց արքաների և նրանց նախնիների պաշտամունքներում կատարված էական փոփոխությունները: Նախ տրված է նախահելլենիստական դարաշրջանում տիրող կացությունը, ապա հիմնական ուշադրություն է հատկացված հելլենիզմին, իսկ վերջնամասում նրա ազդեցությանն ու դերին հին հայոց պետականության գոյության

¹ Տե՛ս Գ.Ս. Саркисян, Тигранокерт..., էջ 75-110:

² Տե՛ս Հ. Պ. Հակոբյան, Հին Հայաստանի մայրաքաղաք Տիգրանակերտը, ՊԲՀ, 2007, N 3, էջ 3-29, Հ. Ժ. Հարությունյան, Տիգրանակերտի տեղադրության հարցի շուրջ, Իրան-Նամե, Եր., 2000, հ. 35, էջ 118-122, T. Sinclair, The site of Tigranocerta, Revue des etudes armeniennes, t. XXV, Paris 1994-1995, էջ 183-253, t. XXVI, Paris 1996-1997, էջ 51-119, M.I. Chaumont, Tigranocerte donnees du problem et etat des recherches, Revue des etudes armeniennes, t. XVI., Paris 1982, էջ 89-110:

³ История древнего мира, т. II, Расцвет древних обществ, под ред. И.М. Дьяконова, М., 1989, էջ 188-193, изд. 3-е (հեղ. Ի.Պ. Վեյնբերգ):

⁴ Ավելի մանրամասն տե՛ս Պ. Հովհաննիսյան, Մովսես Խորենացի. Մատենագիտություն, Եր. 2013, էջ 117-370:

ավելի ուշ դարաշրջանի վրա: Հատկապես կարևոր էին հաջորդ երկու գլուխներում հեղինակի արծարծած խնդիրները: Առաջին անգամ նա հայ և համաշխարհային պատմագրության մեջ փորձ արեց անդրադարձնալու մեհենական պատմիչ Ողյումայ քրմի խնդրին: Սա պարզապես հայտնագործություն էր հեղինակի կողմից, քանզի Խորենացու վկայությունից զատ համարյա ոչինչ հայտնի չէր Ողյումայի մասին: Աշխատության վերջնամասում հեղինակը անդրադարձել է Արտաշես I-ի գործունեությանը:

Գ. Սարգսյանի գիտական գործունեության մեջ կարևոր է նաև «Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին» մենագրությունը: Մինչ այդ Հ. Մանանդյանը գրել էր «Ֆեոդալիզմը հին Հայաստանում (Արշակունիների և մարզպանության շրջան)» ստվարածավալ աշխատությունը (Երևան, 1934թ.): Անուրանալի էր նաև Ն. Ադոնցի աշխատանքը Հայաստանում վաղ ֆեոդալիզմի ուսումնասիրության ասպարեզում: Խոսքը վերջինիս «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» հանրահայտ մենագրության մասին է: Փաստորեն բաց էր մնում ստրկատիրության դարաշրջանի Հայաստանի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների ամբողջական և համապարփակ ուսումնասիրությունը, որին ձեռնամուխ եղավ Գ. Սարգսյանը: Նա կարողացավ գտնել խնդրի լուծման ամենաճիշտ և կարճ ուղին: Դա շարադրանքի ընթացքում պատմահամեմատական մեթոդի կիրառումն էր: Հետազոտողը մեծապես օգտագործել է ինչպես անտիկ պատմիչների տեղեկությունները, այնպես էլ այն եզրահանգումները, որ արել են ռուս և արևմտյան պատմագիտական դպրոցների մի շարք նշանավոր տեսաբանները (Ա.Յ. Լենցման, Ս.Լ. Ուտչենկո, Ե.Մ. Շտաերման, Ի.Դ. Ամուսին, Վ.Վ. Ստրուվե, Մ.Ա. Դանդամաև, Ա.Ի. Տյումենև, Վ. Ուեստերման, Մ. Վեբեր, Ե. Հոնիգման, Ա. Մարիսք և այլոք): Աշխատությունում հիմնական ուշադրություն է հատկացվել հողային սեփականության ձևերի և հասարակության դասակարգային կառուցվածքի տարբերակումների վերլուծությանը: Կարևոր են նաև բնակավայրերի տարատեսակ ու իրարամերժ անվանումների (ավան, գյուղ, գեղ, շեն, դաստակերտ քաղաք) մեկնաբանությունները¹: Տրվել են նաև երկրի սոցիալ-տնտեսական զարգացման միտումները՝ սկսած ուրարտական շրջանից մինչև վաղ ֆեոդալիզմն ընկած ժամանակահատվածը (Ք.հ. IVդ.):

Գ. Սարգսյանի հսկայածավալ գիտական աշխատանքի ամփոփումներից մեկը եղավ «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարկության I հատորում շարադրված բաժինը: Հատորի ամբողջ ծավալը 918 էջ է: Գ. Սարգսյանին են

¹ Տե՛ս Գ.Խ. Սարգսյան, Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին, Եր., 1962, էջ 21, 24: Անհրաժեշտ է նշել, որ Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման որոշ հիմնախնդիրներ մինչ այդ ուսումնասիրվել էին Ս.Տ. Երեմյանի, Ա.Գ. Փերիխանյանի, Ս.Ե. Հակոբյանի և իրավագետ Խ.Ս. Սամուելյանի կողմից:

պատկանում 489-699 էջերը: Փաստորեն նա շարադրել է հելլենիստական դարաշրջանի Հայաստանի պատմական, սոցիալ-տնտեսական և գաղափարա-մշակութային զարգացումների միտումները մինչև Արշակունիների հաստատումը Մեծ Հայքի թագավորությունում: Կարևոր է հատկապես Հայաստան-Արևմուտք (խոսքն առաջին հերթին վերաբերում է Հռոմեական հանրապետությանը, ինչպես նաև փոքրասիական պետություններին) առնչությունների ուսումնասիրությունը: Նա շրջանառության մեջ է դրել իր կողմից հայտնաբերած պատմիչ Հիերոնիմոսի վկայություններից մեկը, որը վերաբերում էր Արտաշես I արքայի՝ դեպի հարավ իրականացրած արշավանքին: Այս հայտնագործությունը լիովին փոխեց Արտաշեսի կողմից հայկական հողերի վերամիավորման մասին մինչ այդ գոյություն ունեցող տեսակետները ¹: Հետագայում նա դարձավ «Հայ ժողովրդի պատմություն» աշխատության միհատորյակի համահեղինակներից մեկը, որտեղ ամբողջապես նրան է պատկանում Հին Հայաստանին վերաբերող հատվածը (Եր., 1972, գրքի խմբ. ակադ. Մ.Գ. Ներսիսյան): 1980թ. այն տպագրվեց նաև ռուսերեն: Կարևոր երևույթ պետք է համարել «Հայկի սերունդները» ստվարածավալ աշխատության հրապարակումը, որը տեղի ունեցավ ավելի ուշ²: Այս աշխատությունը փաստորեն ուներ քաղաքակրթական ուղղվածություն՝ լինելով հայ իրականության մեջ առաջին փորձերից մեկը:

Երկար տարիներ Գ. Սարգսյանը աշխատեց Խորենացու «Հայոց պատմության» ռուսերեն թարգմանության վրա, որը տպագրվեց աշխատության 1500-ամյակի տոնակատարությունների նախօրյակին (այս հրատարակության համար նա գրել էր 50 էջանոց առաջաբան, ինչպես նաև կազմել ծանոթագրությունները (էջ 217-266): Այդ օրերին նրա եռանդուն ջանքերի շնորհիվ հանրապետության մայրաքաղաք Երևանում տեղի ունեցավ միջազգային մեծ գիտաժողով, որին մասնակցում էին բազում երկրների նշանավոր պատմաբան-խորենացիագետներ: Ամենակին չցանկանալով նսեմացնել Խորենացու նախկին թարգմանիչ Մ. Էմինի կատարած աշխատանքը՝ այսուհանդերձ պետք է խոստովանել, որ այս թարգմանությունը շատ հարցերում գերազանցում էր նախորդին (Մ. Էմինի թարգմանությունը տպագրվել է Մոսկվայում 1893թ.): Կատարյալ տիրապետելով ոչ միայն գրաբարին, այլև ռուսերենին՝ Գ. Սարգսյանը կատարեց անզուգական թարգմանություն, որը ամենակատարյալն է այլ լեզուներով թարգմանությունների մեջ: 1991թ. տպագրվեց նաև նրա «Մովսես Խորենացու Հայոց պատմությունը» ուսումնասիրությունը, որը հենց նույն տարում հրատարակվեց ռուսերեն և անգլերեն:

¹ Համեմատության համար տե՛ս Հ. Յ. Աստուրեան, Քաղաքական վերաբերություններ ընդմէջ Հայաստանի եւ Հռովմայ: 190էն ն.Ք. մինչեւ 428 յ.Ք., Վենետիկ 1912, էջ 17-25, Հ.Հ. Մանանդյան, Երկեր, հ. Ա, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության: Սկզբից մինչև Արշակունիների հաստատումը Հայաստանում (66թ. մ.թ.), Եր., 1977, էջ 118 և հաջ.:

² Потомки Хайка. Очерки истории и культуры Армении с древнейших времен до становления Третьей республики, сост. Г.Х. Саркисян, К.Н. Юзбашян, К.С. Худавердян, Ер., 1998.

Նա հանդիսացել է մի շարք հանրապետական («ՊԲՀ», «ԼՀԳ») և միութենական առաջատար հանդեսների («Լրաբեր հին պատմության») խմբագրական հանձնաժողովների անդամ: Նա նաև Հ. Մանանդյանի «Երկերի» խմբագրական հանձնաժողովի անդամ էր (հ. Ա-Զ, Եր. 1977-1985): Գ. Սարգսյանը գործուն մասնակցություն ունեցավ անտիկ պատմիչների երկերի հայերեն թարգմանելու գործում, որ իրականացնում էր ՀՀ ԳԱԱ թղթակից - անդամ Ս.Մ. Կրկյաշարյանը: Քսենոփոնի «Անաբասիսում» նրան է պատկանում անտիկ մատենագրի կյանքին ու ստեղծագործությանը վերաբերող մեկնաբանական հատվածը¹: Նա ներկայացրել է նաև Հերոդոտոսի «Պատմության» հայերեն անգլագական թարգմանության մեկնությունները²: Գ. Սարգսյանը գրեց Ն. Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» կոթողային մենագրության հատուկ նախաբանը³: Նա խմբագրեց նաև Ն. Ադոնցի ֆրանսերենից թարգմանված «Հայաստանի պատմություն» աշխատությունը, որը անգնահատելի երևույթ էր հանրապետության պատմագիտական մտքի համար: Խմբագրել է նաև Ե.Գ. Տեր-Մինասյանի, Թ. Ավդալբեկյանի, Ժ.Գ. Էլչիբեկյանի, Կ.Ս. Մուրադյանի և այլոց մենագրությունները: Չպետք է մոռանալ նաև Գ. Սարգսյանի խմբագրությամբ տպագրված Ն. Կունի «Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները» աշխատության մասին, որը դարձավ մեր հանրապետության ընթերցող հասարակության ամենասիրելի գրքերից մեկը:

Մշտապես լինելով կապված հանրապետության մայր բուհի՝ ԵՊՀ-ի, հատկապես պատմության և արևելագիտության ֆակուլտետների հետ՝ բազմավաստակ գիտնականը նշանակալի դեր ունեցավ դասագրքերի և մեթոդական աշխատությունների ստեղծման գործում: Նա «Հայ ժողովրդի պատմության» քրեստոմատիայի առաջին հրատարակության I հատորի խմբագրիներից էր, որը տպագրվեց 1981թ: Երկար տարիներ հանրապետության դպրոցներում օգտագործվում էր «Հայոց պատմության» դասագիրքը (5-րդ դասարանների համար), որտեղ Գ. Սարգսյանին էին պատկանում հին և վաղ միջնադարյան Հայաստանին վերաբերող բաժինները:

Գ. Սարգսյանի կազմել և հրատարակել է բազմավաստակ գիտնականներ Հ.Հ. Մանանդյանին, Բ.Ն. Առաքելյանին, Ս.Տ. Երեմյանին, Ի.Ս. Ղյակոնովին նվիրված կենսամատենագիտությունները:

¹ Տե՛ս Քսենոփոն, Անաբասիս, թարգ. հին հուն. Ս.Մ. Կրկյաշարյանի, Եր., 1970 (Քսենոփոնի կյանքը և ստեղծագործությունը, էջ 201-220, հեղ. Գ.Խ. Սարգսյան):

² Տե՛ս Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգ. հին հուն. Ս. Մ. Կրկյաշարյանի, Եր., 1986 (Պատմահայր Հերոդոտոսը, էջ 553-578, հեղ. Գ.Խ. Սարգսյան):

³ Տե՛ս Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Եր., 1987, թարգ. ռուս. Ա.Թ. Խոնդկարյանի և Է. Հ. Խոնդկարյանի, («Նիկողայոս Ադոնցի գլուխգործոցը», էջ 550-566, հեղ. Գ.Խ. Սարգսյան):

Գ. Սարգսյանի գիտական «կենսագրության» կարևոր ասպարեզներից էին պատմագրական աշխատությունները: Հանդիսանալով հայաստանյան արևելագիտության և հին աշխարհի պատմության ամենանշանավոր ներկայացուցիչը՝ նա պարբերաբար, յուրաքանչյուր 3-5 տարին մեկ, գրում էր հոդված-հաշվետվություններ: Այս գործերում խոսվում էին հայ մասնագետների կողմից ընթացիկ ժամանակաշրջանում իրականացրած ձեռքբերումների և այն անելիքների մասին, որ պետք է իրականացվեին առաջիկա տարիներին: Այդպիսի հոդվածներ նա հրատարակեց 1961, 1967, 1977, 1979, 1984 թթ. և հետագա տարիներին: Պատմագրական այս հրապարակումները տպագրվեցին ինչպես հանրապետական հանդեսներում, այնպես էլ ԽՍՀՄ-ում մեծ հեղինակություն վայելող «Լրաբեր հին պատմության», «Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդները» և այլ գիտական ամսագրերում

Գ. Սարգսյանը ոչ միայն պայծառատես գիտնական էր, այլև լուսավոր անձնավորություն: Նա դեպի գիտության կաճառը տանող ճանապարհը հարթում էր բոլոր ցանկացողների, հատկապես իր աշակերտների համար: Չունենալով ընդհանրապես ազատ ժամանակ՝ այդուհանդերձ ուշադիր էր իր բոլոր աշակերտների, հատկապես ասպիրանտների նկատմամբ: Մի քանի անգամ կարդում էր ոչ միայն ատենախոսությունները, այլև գիտաժողովների համար գրած թեզերը: Նրա գիտական պատասխանատվությունն անսահման էր: Եթե չլիներ այս նվիրվածությունն ու պահանջկոտությունը, ապա ներկայիս ՀՀ չէր ունենա հին աշխարհի պատմության հետազոտման այն դպրոցը, որի ակունքներում կանգնած էր այս ազնվագույն, մեծանուն գիտնականը և միաժամանակ համեստ քաղաքացին:

Էդիկ Մինասյան - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Հակոբ Հարությունյան - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ: